

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **9-10**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ո՞ր տառի հավելումով *պարպել, մտնել, մրսել, հրձիգ, բրդել* բառերը համապատասխանաբար կստանան *սովորել, դավաճանել, յուրացնել, լավ կրակող, կուտակել* իմաստները:

- Ա. ի Բ. ա Գ. ու Դ. ե Ե. ո

2. Համեղ, գեղեցիկ, ոսկյա, ջրիկ, վճռորոշ բառերից որի՞ն կամ որո՞նց չի կարելի ավելացնել *ամենա* մասնիկը:

- Ա. համեղին Բ. գեղեցիկին և համեղին Գ. ոսկյային և վճռորոշին
Դ. ոսկյային Ե. վճռորոշին

3. Ո՞ր նախադասության ընդգծված բառը «հարագատ» չէ մյուս ընդգծվածներին:


- Ա. Հրայրը մեկ-մեկ էր մեր տուն գալիս:
Բ. Շուշանը նվերները մեկ-մեկ բաժանեց ներկաներին:
Գ. Գայանեն գրիչները երկու-երկու դրեց սեղանին:
Դ. Աստղիկը հինգավան գիրք նվիրեց բուրբին:
Ե. Նրանք շարքում կանգնեցին երկուսով:

4. Ո՞ր բառին ենք «նեղացրել»:

- Ա. ընձեռել Բ. տարկետում Գ. անձինք Դ. իրավմամբ Ե. բարյացակամ

5. Լուծե՛ք խաչաբառը:

1. Ընդհանուր լեզվի տարբերակը տվյալ վայրում:
2. Արձան, անդրի:
3. Հասկանալի, կռահելի, ընկալելի:



Ի՞նչ կատանանք խաչբառի ստվերանշված վանդակների տառերով:

- Ա. տուն և հող Բ. հայերեն և խելք Գ. անձ և փող
Դ. խելք և քսակ Ե. պարզ և հարթ

6. Սիբեիսը աճում է, տառեիսը լողում է, մորեիսը ցատկում է, իսկ ի՞նչ է անում կեռնեիսը:

- Ա. սողում է Բ. լողում է Գ. թռչում է Դ. խոխոջում է Ե. խրխնջում է

7. Եթե բառերը բաժանվեն բանակների, ապա ո՞ր բառագույգերի բառերը կհայտնվեն նույն բանակում:

1. *կորույի-ուժեղ* 2. *խոպան-մշակովի* 3. *խանձարուր-բարուր*
4. *խմաստակ-գիտուն* 5. *գառախալ-դեռատի*
Ա. 1, 2 Բ. 1, 3 Գ. 4, 5 Դ. 2, 3 Ե. 2, 4

8. Յուրաքանչյուր քայլում մեկ տառ փոխելով՝ *պնդուկը* փոխակերպվել, *գնդակ* է դարձել ներքևում բերված փոխակերպումներից չորսով: Ո՞րն է այն մեկը, որ փոխակերպումների ճանապարհին չի հայտնվել:

- Ա. թնջուկ Բ. սնդիկ Գ. հնդիկ Դ. գնդիկ Ե. սնդուկ

9. Ո՞ր բառը մյուս չորսի «ընկերը» չէ:

- Ա. ծակոտել Բ. թռչկոտել Գ. ցատկոտել Դ. կծոտել Ե. ժանգոտել

10. «Միսն առանց ոսկորի չի լինում» առածը նշանակում է՝

- Ա. վաճառողը մսի հետ ոսկոր էլ է տալիս
Բ. լավ մսին ոսկորն է համ տալիս
Գ. վատը ոսկորը չէ, ոսկորտ միսն է
Դ. լավի հետ պատահում է և վատը
Ե. լավ միս ես ուզում, ոսկորի համար էլ վճարի

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Գրատախտակին գրված էին *գաղտնի, ուղղելձար, բարձրունք, դրախտ, անպայման, նախշուն, տաղտակ, սուրբ, թոնչք, պիտոռ* բառերը: Գիտունիկը ջնջեց սխալ գրված բոլոր բառերը: Քանի՞ բառ մնաց գրատախտակին:

- Ա. 2 Բ. 3 Գ. 4 Դ. 5 Ե. 6

12. *Նախ՝ կարոտի նման դեռ անձանոթ կյանքի Բիլ ծովերում նավող նավակի մեջ Իբրևն ցնորք գայթող, կամ երագանք անգին – Հեռուններից կանչեց իմ Նավգիկեն:*

Ո՞ր բառն իր հումանիշը չունի բերված քառատողում:

- Ա. սայթաքել Բ. շառագույն Գ. պատրանք Դ. նավարկել Ե. մակույկ

13. *Կայծակ* բառում *այծ* է թաքնված: Տրված բառերի մեջ քանի՞ ազգության ներկայացուցիչ կա նույն կերպ թաքնված՝ *դելֆիններ, հայելի, պարիսպ, հաշվեդրամ, երևանցի, սարաբնակ, շողորոք, պլեհավաք, բասկետբոլ, բելառուսական, փարիզցի:*

- Ա. երեք Բ. հինգ Գ. յոթ Դ. ութ Ե. տասը


14. «Կուժ, քե՛զ սասե՛մ, կուլա՛, դու լսիր» առածը նշանակում է՝

- Ա. կուժն ու կուլան մեկի գլխին կոտրել Բ. կուժն էլ, կուլան էլ նույն կավից են
Գ. մեկի միջոցով մյուսին լավություն անել Դ. մեկ կծին խփել, մեկ կուլային
Ե. մեկի միջոցով մյուսին խրատել, հանդիմանել

15. Ո՞ր բառագույգը չի համապատասխանում ընդհանուր օրինաչափությանը:

- Ա. քերծ-քերծե Բ. մոմ-մոմե Գ. կավ-կավե Դ. փայտ-փայտե Ե. քար-քարե

16. Տառերը գրված են ինչ-որ օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներում տրված տառերից ո՞րը պետք է դնել մեղվիկի փոխարեն:



ե, է, չ, հ, ու, շ,

Ա. կ Բ. չ Գ. է Դ. ա Ե. շ

17. Տրված արտահայտություններից չորսը նույն ծնողի հարազատ զավակներն են, մեկը՝ ոչ: Ո՞րն է այդ մեկը:

- Ա. Գործն է անմահ, լավ իմացեք...
- Բ. Օրեր են, կմթնեն, անց կկենան:
- Գ. Մենք ամենքս հյուր ենք կյանքում...
- Դ. Պրծավ, էլ Նագարը կռիվ չի գնա...
- Ե. Աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես:

18. Մարիամն ունի խորանարդիկներ, որոնց բոլոր նիստերի վրա գրված է մեկական տառ: Այդ տառերն են՝ **խ, մ, ու, ճ, ա, տ, ա, յ, կ, ա**: Մարիամը քանի՞ խորանարդիկ պետք է դնի կողք կողքի, որ ստանա հնարավոր ամենաերկար բառը:

Ա. երեք Բ. չորս Գ. հինգ Դ. ութ Ե. տասը

19. Աջ կողմում բերված է տառային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառային ծածկագրին:

ՈՒՐԱՆ
+
ՈՒՐԱՆ

ԿԱՊԱՐ

Ա.	5302	Բ.	5402	Գ.	7602	Դ.	5804	Ե.	6203
	+		+		+		+		+
	<u>5302</u>		<u>5402</u>		<u>7602</u>		<u>5804</u>		<u>6203</u>
	10604		10804		15204		11608		12406

20. **Աչք տալ մեկին** դարձվածքը նշանակում է՝

- Ա. չարակամորեն նայել մեկին
- Բ. ուշադրությամբ նայել մի բանի
- Գ. հետևել մեկի օրինակին
- Դ. հույսը մեկի վրա դնել
- Ե. մի բանի վրա աչք ունենալ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Բերված բառերը, բացի մեկից, միևնույն քայլով կդառնան «երկերեսանի»: Ո՞րը «երկերեսանի» չի դառնա:

Ա. կտրիչ Բ. կարիչ Գ. կապիչ Դ. ուտիչ Ե. հաշվիչ

22. Ո՞ր տարբերակի տառերը վերադասավորելով՝ կստանանք Շիրվանզադեի ստեղծագործություններից մեկի վերնագիրը:

Ա. ՆԱԶՌՈՒԻ Բ. ՓԱՆՏՈՍ Գ. ՍՈՔԱ Դ. ԱՍԲԻԼ Ե. ԲԱՆՂՈՒԶՈ

23. **Քեռայր** նշանակում է՝

- Ա. քեռու տղա
- Բ. քեռու քարայր
- Գ. քեռակնոջ ամուսին
- Դ. քրոջ ամուսին
- Ե. մորեղբայր

24. Քանի՞ տառանի է նկարելուկով գաղտնագրված բառը:

Շ
ԿՈ

Ա. երեքտառանի Բ. հինգտառանի Գ. յոթտառանի
Դ. ինըտառանի Ե. տաստառանի

25. Ի՞նչն է՝ ոտքով ջուր է խմում, Կտուցով ձտեր հանում: (*ժողովրդական հանելուկ*)

Ա. երկինք Բ. արագիլ Գ. հասկ Դ. ճանապարհ Ե. գավազան

26. Հետևյալ բառերից որի՞ց կարելի է գրաշրջմամբ (այսինքն՝ այդ բառի բոլոր տառերն օգտագործելով) ստանալ նս 4 բառ:

Ա. նարդի Բ. կերաշատ Գ. վարգ Դ. տղա Ե. նկարատակ

27. Հետևյալ նկարելուկներից ո՞րն ունի երեք պատասխան:

Ա. Բ. Գ. Դ. Ե.

28. 1. Աշխարհով մեկ լինել – ա) շատ ուրախանալ, բ) թափառել
2. Աչքը քաղցր – ա) բարեհամբույր, բ) ազահ, անկուշտ
3. Անուն հանել – ա) հոշակ ձեռք բերել, բ) մեկին կանչել
4. Սառույցը շարժվել – ա) գարուն գալ, բ) գործը տեղից շարժվել
5. Ձուկը գլխից բռնել – ա) հմուտ որսորդ լինել, բ) գործը կարևորից սկսել

Ստորև բերված տարբերակներից ո՞րն է ցույց տալիս ճիշտ բացատրված դարձվածքները:

Ա. 1-բ, 2-ա, 3-բ, 4-ա, 5-ա Բ. 1-ա, 2-բ, 3-ա, 4-ա, 5-ա Գ. 1-ա, 2-ա, 3-ա, 4-բ, 5-բ
Դ. 1-ա, 2-բ, 3-բ, 4-բ, 5-ա Ե. 1-բ, 2-բ, 3-ա, 4-ա, 5-բ

29. *Կաստակաշատ ֆուտբոլիստների մասնակցությամբ մեկնարկեց «Կաշվե հին գնդակ» մրցաշարը: Ընդամենը քանիսի՞ն ընդգրկեցին ընկերական մրցաշարում:*

Պատասխանը թաքնված է պայմանում և հարցում:

Ա. 5 Բ. 15 Գ. 18 Դ. 23 Ե. 32

30. **Անարգ իմաստ, նուրբ ենթադրություն, բարդ առաջադրանք, երկաթե չանչ, հայ բարերար** արտահայտություններն ունեն մի ընդհանուր հետաքրքիր օրինաչափություն:

Օգտվելով այդ օրինաչափությունից՝ գտի՛ր, թե ստորև բերված տարբերակներից որում են այդ բառակապակցությունները ճիշտ շղթա կազմել:

- Ա. անարգ իմաստ, հայ բարերար, նուրբ ենթադրություն, երկաթե չանչ, բարդ առաջադրանք
- Բ. հայ բարերար, նուրբ ենթադրություն, անարգ իմաստ, բարդ առաջադրանք, երկաթե չանչ
- Գ. նուրբ ենթադրություն, անարգ իմաստ, հայ բարերար, բարդ առաջադրանք, երկաթե չանչ
- Դ. երկաթե չանչ, նուրբ ենթադրություն, հայ բարերար, բարդ առաջադրանք, անարգ իմաստ
- Ե. անարգ իմաստ, բարդ առաջադրանք, երկաթե չանչ, նուրբ ենթադրություն, հայ բարերար